«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան» (Եբր. 13:8):

Ծրջաբերական նամակ Ապրիլ 2015

Տեր Հիսուս Քրիստոսի Անունով սրտանց ողջունում եմ ողջ երկրում գտնվող բոլոր եղբայրներին և քույրերին Եբր. 9:28 համարով. *«Նույնպես էլ Քրիստոսը շատերի մեղքերը վերցնելու համար մեկ անգամ զոհաբերվեց, և* **երկրորդ անգամ առանց մեղքի կհայտնվի իրեն սպասողների փրկության համար**»:

Քրիստոսի երկրորդ գալուստը Նրա խոստացված վերադարձն է (Հովհ. 14:1-3): Նա վերադառնում է բոլոր փրկագնվածների համար, ովքեր **սպասում են Իրեն**: Նա վերադառնում է բոլոր փրկագնվածների համար, ովքեր **պատրաստեն**. *«Պատրաստները նրա հետ հարսանիքի խնջույքի մտան. դուռն էլ փակվեց»* (Մատթ. 25:10): Նա վերադառնում է բոլոր փրկագնվածների համար, ովքեր **սիրում են Նրա հայտնությունը**. *«Եվ նրանք, ովքեր սիրեցին նրա հայտնությունը»*, կստանան արդարության խոստացված պսակը (2 Տիմ.4:8):

Քրիստոսի վերադարձը շատ մոտ է: Եվ կարևոր է, որ մեզանից յուրաքանչյուրի մեջ լինեն այդ երեք հատկանիշները՝ սպասել Նրան, պատրաստ լինել, սիրել Նրա հայտնությունը: Մենք ապրում ենք դուրս գալու կոչի ժամանակներում, համաձայն 2 Կորնթ. 6:14-18 համարների. *«Դրա համար նրանց միջից դուրս գնացեք ու բաժանվեցեք,- ասում է Տերը»*: Վերջին ժամանակների վերաբերյալ մարգարեությունն ամբողջությամբ իրականանում է մեր աչքերի առջև: Սա այն ժամանակն է, որի մասին Տերն ասում է. *«Այդպես էլ դուք, երբ այս բոլոր բաները կատարված տեսնեք, իմացեք, որ Աստծո արքայությունը մոտ է»* (Ղուկաս 21:28-36): Շնորհքով, մարգարեական Խոսքի աստվածաշնչյան կողմնորոշման միջոցով մենք կարող ենք պարզ տեսնել ժամանակների նշանները բոլոր ոլորտներում: Ողջ երկրի վրա բոլոր աստվածաշնչյան հավատացյալներին հոգևոր քնից արթնացնելու կոչը հիմա հնչում է ավելի ու ավելի ուժեղ. *«Ահա փեսան գալիս է, վեր կացեք, պատրաստվեք, ելեք Նրան դիմավորելու»* (Մատթ.25:1-10):

Սա այն պատգամն է, որը հիմա նախորդում է Քրիստոսի երկրորդ գալստին: Հավատացյալները կույսերն են, որոնք մաքրել

են իրենց ճրագները: Իմաստուն կույսերը անհանգստանում են ոչ միայն ճրագ, այսինքն՝ լույս, պարզություն ունենալու համար, այլ նրանց համար ամենակարևորը կատարյալ պատրաստությունն է՝ հավատքով, հնազանդությամբ և Սուրբ Հոգու յուղով լեցունությամբ: Մի հեղինակ այսպես է գրել իր երգում՝ «Միայն անոթներ, սուրբ Ուսուցիչ, բայց Քո զորությամբ լեցուն…»: Այժմ Հոգու գործողությամբ կատարվում է երկրային Հարսի և երկնային Փեսայի միությունը՝ կատարյալ սիրով և Աստծո յուրաքանչյուր Խոսքի հետ կատարյալ ներդաշնակությամբ:

«Ես կնշանվեմ քեզ հետ»

Ովսե 2:19 համարում Տերը խոստացել է. *«Եվ քեզ պիտի նշանեմ Ինձ հետ հավիտյան, այո՛, քեզ պիտի նշանեմ Ինձ արդարությամբ, իրավունքով, գթասիրությամբ ու ողորմությամբ»* (Ովսե 2:19): Դա Փրկչի շնորհքի առաջարկությունն է փրկագնվածներին: Գողգոթայի խաչի վրա հանուն սիրո Փեսան վճարեց փրկագին Հարսի համար (Հովհ. 3:16): Նոր ուխտի թափված արյունով (Մատթ. 26:26-28) եկեղեցին փրկագնվեց: *«Որով փրկություն ունենք Նրա արյունով՝ մեղքերի թողություն Իր շնորհքի մեծության չափով»* (Եփես. 1:7): Ինչպես Ադամի կողքը բացվեց, որ այնտեղից դուրս գար Եվան և այնուհետև ներկայացվեր նրան (Ծննդոց 2), այնպես էլ խաչի վրա բացվեց Փրկչի կողքը (Հովհ. 19:34) և փրկագնվածների խումբը Հարս-Եկեղեցին է, ով Նրան հանդիպելու է օդերում, երբ բարձրանա հարսանիքի ընթրիքին (1 Թես. 4:17): *«Առաջին մարդը՝ Ադամը, կենդանի շունչ եղավ, երկրորդ Ադամը՝ կենդանարար հոգի»* (1 Կորնթ. 15:45): Աստծո բոլոր որդիներն ու դուստրերը *«Նրա մարմնի անդամներն են, Նրա մարմնից ու Նրա ոսկորներից»*: Այնուհետև Պողոսը գրում է. *«Սա մեծ խորհուրդ է, բայց ես խոսում եմ եկեղեցու և Քրիստոսի մասին»* (Եփես. 5:32):

Ինչպես նշանդրեքի ժամանակ տղամարդը դառնում է փեսացու, իսկ նշանված աղջիկը՝ հարսնացու, այնպես էլ ճշմարիտ դարձը դեպի Հիսուս Քրիստոսը «այո» է Նրան ասված, և այդպիսով Փրկիչը դառնում է երկնային Փեսա, իսկ փրկագնվածները՝ Նրա Հարսը: Մեկ հոգով նշանդրեք չի լինում. այն կատարվում է, երբ երկուսը հանդիպում են իրար, նրանց սրտերը բաբախում են միմյանց

հանդեպ սիրով և աղջիկը «այո» է պատասխանում:

Բոլոր փրկագնվածները, որոնց մեջ ցանվել է Խոսքի սերմը (Ղուկաս 8:11), վերստին ծնվում են կենդանի հույսի համար (1 Պետրոս 1:3): Նրանք ստանում են Փրկչի աստվածային բնությունը և հավիտենական կյանք: *«Ուրեմն եթե մեկը Քրիստոսի մեջ է՝ նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ»* (2 Կորնթ.5:17): Նա, ով պատկանում է Հարս-Եկեղեցուն, անձնական հարաբերություն ունի Տիրոջ հետ, ինչպես միմյանց հետ նշանվածները, լսում է այն, ինչ Փեսան ասում է Իր սիրելի Հարսին Իր Խոսքի միջոցով և կատարում է այն: Այդպես է կատարվում այս խոսքը. *«Եվ նրա կինը պատրաստեց իրեն»*:

Նրանք, ովքեր պատկանում են Հարս-Եկեղեցուն, Փեսայի գալստյան ժամանակ պատրաստ կլինեն: Նրանք սիրում են Նրան և անհամբեր սպասում են, որ Նրա հետ գնան հարսանիքին, ինչպես գրված է. *«Երանելի են Գառան հարսանիքի ընթրիքին կանչվածները»*(Հայտն. 19:7-9): Խոստացված մարգարեի ծառայության միջոցով Սուրբ Հոգին գրված Խոսքը դարձրեց բացահայտված Խոսք բոլոր նրանց համար, ովքեր հավատում են ճշմարտապես: Եվ ավելին, բոլոր նրանց մեջ, ովքեր հավատում են և պատկանում են Հարս-Եկեղեցուն, Խոսք-Պատգամն իրականացրել է այն, ինչի համար ուղարկվել է (Եսայի 55:11, Հռոմ. 10:16-21):

Հովհաննես Մկրտիչը բացականչեց. *«Հարսն ունեցողն է փեսա, բայց փեսայի բարեկամը, որ կանգնած է ու լսում է նրան, փեսայի ձայնի վրա ուրախանալով ուրախանում է. արդ իմ այս ուրախությունն էլ կատարյալ է»* (Հովհ.3:29): Հովհաննեսը մարգարեից ավելին էր, նա առանձնահատուկ հանձնարարություն ստացած խոստացված մարգարե էր. *«Որովհետև սա նա է, որի համար գրված է. «Ահա ես իմ հրեշտակին ուղարկում եմ Քո առջևից, որ Քո առաջ Քո ճանապարհը պատրաստի»* (Մատթ.11:9-10):

Ոչ մի քարոզիչ այնքան հաճախ չի խոսել Հարս-Եկեղեցու, պատրաստության և հափշտակության թեմայով, ինչքան Աստծո մարդ Ուիլյամ Բրանհամը: Ինչպես բոլորին հայտնի է, աստվածային կանչը նրան ուղղվեց 1933 թվականի հունիսի 11-ին. **«Ինչպես Հովհաննես Մկրտիչն ուղարկվեց Քրիստոսի առաջին**

գալստից առաջ, այնպես էլ քեզ տրված պատգամը կնախորդի Քրիստոսի երկրորդ գալստին»: Նրա ծառայությունը, որն ուղղակիորեն կապված է Աստծո փրկության ծրագրի հետ, արդյունավետ է եղել, և նրա ուրախությունն էլ կատարյալ է լինելու, ինչպես Հովհաննես Մկրտչի ուրախությունը:

Այժմ կատարվում է սա. *«Եվ Հոգին ու հարսն ասում են. «Ե՛կ»: Եվ լսողն էլ կասի. «Ե՛կ»: Նա, ով ծարավ է, թող գա, և նա, ով կամենում է, թող կյանքի ջուրը ձրի առնի»* (Հայտն. 22:17):

Բայց նա, ով Աստծո գործերից ու խոսքերից խանդավառված, ուզում է փառք տալ որևէ հրեշտակի կամ Աստծո ծառայի՝ միայն Աստծուն փառք տալու փոխարեն, ինչպես Հովհաննեսն արեց Պատմոս կղզու վրա, կլսի նույն խոսքերը, որոնք մի ժամանակ ուղղված էին Հովհաննեսին. *«Զգուշացիր, մի արա այս, որովհետև ես ծառայակից եմ քեզ, քո եղբայր մարգարեներին և այս գրքի մարգարեության խոսքերը պահողներին.* **Աստծուն երկրպագիր**» (Հայտն.22:9):

Հայացք սկզբին՝ ճիշտ հասկանալու համար վերջը

Հովհաննես Մկրտչի ծառայությամբ իրականացավ ոչ միայն Մաղաքիա 3:1 համարում գրվածը՝ *«Ահա ես ուղարկում եմ իմ դեսպանը, որ ճանապարհ պատրաստի իմ առաջին»*, այլև Մաղաքիա 4:6-ի առաջին մասը. *«Եվ նա պիտի դարձնի հայրերի սիրտը դեպի որդիները†»*: Այսպես ասաց հրեշտակը նրա հայր Զաքարիային. *«†որպեսզի հայրերի սրտերը որդիներին դարձնի, անհնազանդներին՝ արդարների իմաստության, որպեսզի Տիրոջ համար պատրաստ ժողովուրդ կազմի»* (Ղուկաս 1:16, 17): Դրա մասին էր խոսքը սկզբում՝ Հովհաննես Մկրտչի ծառայության մեջ, հիմա էլ դրա մասին է խոսքը վերջնական ծառայության մեջ, այսինքն՝ պատրաստել Տիրոջ ճանապարհը և Տիրոջ համար պատրաստ ժողովուրդ կազմել:

Ողջ Հին Կտակարանում խոսվում է հայրերի մասին, որոնց Աստված տվել է Ուխտի խոստումները (Հռոմ. 9:4,5): *«Շատ անգամներ ու շատ ձևերով Աստված առաջուց մարգարեների միջոցով մեր հայրերի հետ խոսելով՝ այս վերջին օրերին խոսեց մեզ հետ Որդու*

միջոցով, որին ամեն բանի ժառանգ դրեց, որի միջոցով աշխարհն էլ ստեղծեց» (Եբր.1:1,2): Գործք 13:32,33 համարներում կարդում ենք. *«Եվ մենք ձեզ ավետարանում ենք այն խոստումը, որ հայրերին տրվել էր: Աստված այն կատարեց մեր մեջ, որ նրանց որդիներն ենք, Հիսուսին հարություն տալով+»*: Ամեն անգամ, երբ կատարվում են փրկության պատմության հետ կապ ունեցող իրադարձություններ, իրականանում են դրա հետ կապված Աստծո խոստումները: Մաղաքիա 4:5 համարում գրված է. *«Ահա ես կուղարկեմ ձեզ համար Եղիա մարգարեն, Տիրոջ մեծ և ահեղ օրը գալուց առաջ»*: 6-րդ համարի երկրորդ մասը, այսինքն՝ «որդիների սրտերը դարձնի հայրերին», կատարվում է մեր ժամանակներում: Ահա թե ինչու մեր Տերը Հովհաննես Մկրտչի ծառայությունից հետո շեշտեց խոստումը՝ ասելով. *«Ճշմարիտ է, առաջ Եղիան պիտի գա և ամեն բան վերականգնի»* (Մատթ. 7:11): Այդպես է գրված նաև Մարկ. 9:12 համարում: Այսօր Նա մեզ կասեր. «Եղիան եկավ, մարգարեն բերեց աստվածային պատգամը, և խոստման զավակները հավատում են այնպես, ինչպես Գիրքն է ասում, ուսմունքով ու կյանքով վերադառնում են այն հոգևոր վիճակին, որում եղել է առաջին եկեղեցին սկզբում: Սա է աստվածային պատգամի նպատակը՝ որ աստվածաշնչյան հավատացյալների մեջ և Հարս-Եկեղեցում ամեն բան, բացարձապես ամե՛ն բան լինի ըստ Աստվածաշնչի և վերականգնված:

Բոլոր նրանք, ովքեր պատկանում են Հարս-Եկեղեցուն, գիտեն, ինչ պատճառով է այս ժամանակներում բացահայտվել մարգարեական Խոսքը, որը ոչ մի մեկնության ենթակա չի: Այն հոգևոր խավարում փայլող լույսի պես է (2 Պետրոս 1: 19-21):

Միայն այն, ինչ գրված է Աստվածաշնչում, իրոք աստվածաշնչյան է և պիտանի է քարոզչության համար, հետևաբար հավատքով սահմանված է ընտրյալների համար: Եկեղեցին կառուցված է առաքյալների և մարգարեների ճշմարիտ հիմքի վրա (Եփես.2): Ահա թե ինչու պատգամը սա է՝ վերադառնալ Խոսքին, վերադառնալ սկզբին, վերադառնալ առաքյալների մաքուր վարդապետությանը, վերադառնալ փրկության բոլոր փորձառություններին: 2 Կորնթ. 6:14-18 համարներում շատ լուրջ խոսքեր են ուղղված Աստծո ժողովրդին. *«Կամ Աստծո տաճարը կուռքերի հետ ի՞նչ համաձայնություն ունի: Որովհետև դուք կենդանի Աստծո տաճարն*

եք, ինչպես որ Աստված ասաց. «Նրանց մեջ կբնակվեմ ու նրանց մեջ կշրջեմ, նրանց Աստվածը կլինեմ ու նրանք՝ Իմ ժողովուրդը»: Վերջին պատգամը կապված է դուրս գալու և զատվելու կոչի հետ, ինչպես նաև կատարյալ վերականգնման ու պատրաստության հետ: Նախ պետք է դուրս գանք, որպեսզի այնուհետև կարողանանք մտնել:

Նրա խոստացված վերադարձը դռների մոտ է (Մատթ. 24:33): Վերջին ժամանակներում կատարվելիք իրադարձությունների վերաբերյալ մեր Տերն ու Փրկիչն ասել է. *«Եվ երբ այս բաներն սկսեն լինել, վերև նայեցեք ու ձեր գլուխները բարձրացրեք, որովհետև ձեր փրկությունը մոտ է»* (Ղուկ.21:28), և միաժամանակ զգուշացրել. *«Ուրեմն արթուն կացեք և ամեն ժամանակ աղոթեցեք, որ արժանի լինեք այն բոլոր բաներից փրկվելու, որ տեղի են ունենալու, և կանգնելու Մարդու Որդու առաջ»* (հ. 36): Մենք տեսնում ենք աստվածաշնչյան մարգարեությունների իրականացումը Իսրայելի վերաբերյալ, ազգերի վերաբերյալ, ողջ աշխարհում և հատկապես Եկեղեցում և կարող ենք անդադար բացականչել. «Այսօր այս կամ այն գրվածը կատարվեց մեր աչքերի առջև»: Դա մեզ հիշեցնում է Նրա խոսքերը. *«Բայց այս բաները ես ձեզ ասացի, որ երբ ժամանակը գա, դուք հիշեք, թե ես ձեզ ասացի դրանք»* (Հովհ. 16:4): Ամեն:

Հիմա ամենակարևորը Հարսի և Փեսայի կատարյալ միությունն է: Ոչ մի հավատացյալի համար օգուտ չկա միայն ժամանակների նշանները տեսնելուց, այլ ներկայումս արդարացման (Հռոմ. 5:9), սրբացման (1 Թես. 5:23), Սուրբ Հոգու մկրտության (1 Կորնթ. 12:13) և մյուս աստվածաշնչյան փորձառությունները պետք է նույնքան իրական լինեն, որքան առաքյալների ժամանակներում: Վերջում Աստծո կատարյալ սերը, որը դրսևորվել է Գողգոթայի խաչի վրա հաշտությամբ ու մեղքերի թողությամբ, կդրսևորվի նաև բոլոր հաշտվածների մեջ, որոնք ստացել են իրենց մեղքերի թողությունը, որովհետև *«Այս եմ պատվիրում ձեզ, որ դուք միմյանց սիրեք»* (Հովհ. 15:17): Երբ ճշմարիտ հավատացյալները մեկ սիրտ և մեկ հոգի դառնան կթափվեն առաջին և վերջին անձրևները (Հակոբ 5:7-11, Հովել 2:23, Եսայի 44:3, Զաքարիա 10:1): Այդ ժամանակ Աստծո զորությունը կդրսևորվի և ինչպես Հոբի դեպքում, ով աղոթեց իրեն մեղադրող բարեկամների համար, կլինի կրկնակի չափով վերականգնում այն ամենի, ինչ Աստված սկզբում տվել է Եկեղեցուն:

Միայն կատարյալ սերն է կատարելության կապը: *«Եվ այս բոլորի վրա հագեք սերը, որը կատարելության կապն է»* (Կողոս. 3:14): Կատարյալ սեր Փրկչի հանդեպ, փրկագնվածների հանդեպ, Աստծո յուրաքանչյուր Խոսքի հանդեպ, ինչպես նաև ճշմարիտ և կենդանի հավատք Աստծո յուրաքանչյուր խոստման հանդեպ: Երբ բոլորս լցվենք Սուրբ Հոգով, ինչպես Գործք 2-րդ գլխում և առաջին եկեղեցում, այդ ժամանակ կարող ենք իրոք ասել, որ *«Աստծո սերը մեր սրտերում սփռված է Սուրբ Հոգու միջոցով, որ մեզ տրվեց»* (Հռոմ. 5:5): Տեսական պատգամը, որը տարբեր կերպ են մեկնում, ոչ մի օգուտ չունի, և միայն այն ժամանակ, երբ ամեն բան վերականգնվի աստվածային կարգի համաձայն, կհաստատվի այս խոսքը. *«Որովհետև ովքեր Աստծո Հոգով են առաջնորդվում, Աստծո որդիներ են»* (Հռոմ.8:14):

Երբ Փեսան իրոք վերադառնա, Նրա «արքնության կանչը» նախ կհնչի Քրիստոսով ննջածների համար, և հետո բոլոր նրանք, ովքեր ողջ են Քրիստոսով, կփոխվեն և բոլորը միասին կհափշտակվեն ամպերով Տիրոջը դիմավորելու: Դա է ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ Իր սուրբ և հավիտենական Խոսքում: (1 Թես. 4:13-18):

Տիրոջ վերադարձը իրական է լինելու, ինչպես որ իրական է եղել Նրա համբարձումը. *«Այն նույն Հիսուսը, որ ձեզանից երկինք վերցվեց, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսնում եք Նրան երկինք գնալիս»* (Գործք 1:11): Իրական է լինելու մեռելների հարությունը (1 Կորնթ. 15:42-44): Իրական է լինելու մեր մարմնի վերափոխումը (1 Կորնթ. 15:54): Իրական է լինելու հափշտակությունը (1 Թես. 4:17): Իրական է լինելու հարսանիքի ընթրիքը (Հայտն. 19:7): Ամեն բան իրական է լինելու, նաև հազարամյա թագավորությունը (Հայտն, 20) և վերջապես նոր երկինքն ու նոր երկիրը (Հայտն. 21): Մարանաթա՛: Ե՛կ, Տեր Հիսուս: *«Այս բաները վկայողն ասում է. «Այո՛, ես շուտով գալիս եմ»: Ամե՛ն: Ե՛կ, Տե՛ր Հիսուս»* (Հայտն.22:20):

Ոչինչ չավելացնել Խոսքին

Փրկության պատմության հետ կապված՝ Բրանհամ եղբոր ծառայությունը նույնքան կարևոր է եղել, ինչքան Մովսեսի, Հովհաննես Մկրտչի և Պողոս առաքյալի ծառայությունը: Աստծո պատգամաբերների միջոցով քարոզված Խոսքը փոխանցվել է մեզ, և դա՛ ենք մենք քարոզում, որովհետև միայն Խոսքն է մնում հավիտյան (1 Պետրոս 1:25): 2 Պետրոս 3:14-18 համարներում խոստացված վերադարձի հետ կապված՝ Պետրոսը հավատացյալներին հորդորում է ջանալ գտնվելու անբիծ և անարատ: Նա նաև վկայակոչում է Պողոսի նամակները՝ այնուհանդերձ շեշտելով, որ դրանցում դժվարըմբռնելի բաներ կան: Մենք հասկացել ենք, որ աստվածաշնչյան պատգամում կարևորը դժվարըմբռնելի խոսքերը չեն, ինչպես մի ժամանակ Պողոսի խոսքերն էին, որոնց մասին Պետրոսն ասում է 2 Պետրոս 3:16 համարում, կամ Բրանհամ եղբոր խոսքերը, որոնք նա ասել էր՝ մեծապես ակնկալելով Աստծո վերջնական գործողությունը: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա կան մարդիկ, ովքեր համատեքստից հանում են Բրանհամ եղբոր խոսքերը և դրանց հիման վրա սեփական, կեղծ ուսմունքներ են ստեղծում:

Այն պատվերը, որը Պողոսը տվեց իր հավատարիմ գործընկեր Տիմոթեոսին 2 Տիմ. 4:9 համարում, տվել է մեր Տերն Ինքը Բրանհամ եղբորը 1933 թվականին տեսիլքի մեջ: Աստծո ամեն ճշմարիտ սպասավոր իր սրտում կընդունի այդ խոսքերը. *«Արդ այս վկայությունն եմ դնում Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի առաջ, որ դատելու է կենդանիներին ու մեռածներին իր հայտնության և թագավորության ժամանակ. Խոսքը քարոզիր շարունակ՝ ժամանակին լինի, թե ժամանակից դուրս, հանդիմանիր, սաստիր, հորդորիր ամենայն համբերատարությամբ ու վարդապետությամբ: Որովհետև ժամանակ կգա, որ ողջամիտ վարդապետությունը չեն հանդուրժի, այլ իրենց հատուկ ցանկությունների համաձայն ուսուցիչներ կդիզեն իրենց վրա՝ իրենց ականջներին հաճելի եղածների համեմատ և իրենց ականջները ճշմարտությունից հետ կդարձնեն ու առասպելների հետևից գնալով կմոլորվեն: Բայց դու ամեն բանում արթուն կաց՝նեղություններ կրելով: Ավետարանչի գործն արա, քո պաշտոնը կատարիր»*:

Տերն ինձ էլ պատվիրեց կարդալ 2 Տիմ. 4-րդ գլուխը, 1980

թվականի փետրվարին Ֆրանսիայի Մարսել քաղաքում: Նախորդ երեկոյան ինձ առաջին անգամ հարցրել էին Հայտնության 10-րդ գլխի յոթ որոտների նշանակության մասին: Ես չունեի այդ հարցի պատասխանը: Կարդալով 2 Տիմ. 4-րդ գլուխը՝ ես անմիջապես հասկացա, թե ինչու պիտի կարդայի այդ հատվածը. ես կարող եմ և պարտավոր եմ սովորեցնել միայն Խոսքը, և չեմ կարող ու չպետք է մասնակցեմ մեկնություններին: Փոխզիջումն անհնար է ինձ համար, դա բացառվում է:

Նա, ով իրոք Աստծուց է կանչված, սրտում կընդունի Տիմոթեոսին ուղղված Պողոսի այնքան թախանձագին հորդորը և կկատարի այն. *«Արդ այս վկայությունն եմ դնում Աստծո առաջ+ Խոսքը քարոզիր»*: Այն, ինչ գրված չէ Խոսքում, սահմանված չէ հավիտենական Ավետարանի քարոզչության համար: Եվ նա, ով քարոզում է որևէ ոչ աստվածաշնչյան բան, եթե նույնիսկ այն ներկայացնում է որպես հայտնություն, անեծք է բերում իր վրա (Գաղատ. 1:8), եթե նույնիսկ դա գար երկնքի հրեշտակից:

Հովհաննես առաքյալը մեզ է ուղղում այս շատ լուրջ զգուշացումը. *«Որովհետև ես վկայում եմ ամեն մեկին, ով լսում է այս գրքի մարգարեության խոսքերը: Եթե մեկը սրանց վրա բան ավելացնի, Աստված նրա վրա կավելացնի այն պատուհասները, որ գրված են այս գրքում: Եվ եթե մեկն այս գրքի մարգարեության խոսքերից բան պակասեցնի, Աստված նրա բաժինը կպակասեցնի կյանքի գրքից, սուրբ քաղաքից և այս գրքում գրվածներից»*:

Երանելի են կոչվում բոլոր նրանք, ովքեր պահում են միայն այն, ինչ գրված է. *«Երանելի են այս մարգարեության խոսքերը կարդացողը և լսողները, և սրա մեջ գրվածները պահողները, որովհետև ժամանակը մոտեցել է»* (Հայտն.1:3):

Աստված մտածում է այն, ինչ ասում է և ասում է այն, ինչ մտածում է

Դանիել մարգարեին ասվեց. *«Եվ դու, ո՛վ Դանիել, փակիր այս խոսքերը և կնքիր գիրքը մինչև վերջին ժամանակը. շատերը պիտի քննեն և գիտությունը պիտի շատանա»* (Դանիել 12:4):

Մենք վերջին ժամանակներում ենք. կնքված գիրքը բաց է և դրա բովանդակությունը բացահայտված է: Գոհություն Աստծուն, այլևս ոչինչ գաղտնիք չէ, որովհետև *«ահա հաղթեց առյուծը, որ Հուդայի ցեղից է՝ Դավթի արմատը, որպեսզի գիրքը բաց անի ու նրա յոթ կնիքները բացի»*: (Հայտն. 5:5):

«Այս գրքի մարգարեության խոսքերը մի՛ կնքիր, որովհետև ժամանակը մոտ է» (Հայտն.22:10): Հայտնության 5-րդ գլխում գիրքը դեռ կնքված էր:

Աստվածային փրկության ծրագիրը մանրամասն շարադրված է Խոսքում: Մենք կարող ենք ճիշտ դասավորել եկեղեցու յոթ հրեշտակներին (Հայտն. 2 և 3), Եփրատի վրա կապված չորս հրեշտակներին, որոնք ազդարարում էին դատաստանները (Հայտն. 9-րդ գլուխ), նաև փող հնչեցնող յոթ հրեշտակներին (Հայտն. 8-11): Մեզ համար պարզ են տարբեր համատեքստերը, երբ Տերն իջնում է որպես Ուխտի Հրեշտակ (Հայտն. 10), կամ երբ հայտնվում են երկու մարգարեները (Հայտն.11), կամ այն, ինչ վերաբերում է Աստծո բարկության յոթ գավաթներն ունեցող հրեշտակներին (Հայտն. 16): Բոլոր իրադարձությունների լրիվ հայտնությունը մեզ տրվել է շնորհքով և բացահայտվել ճիշտ համատեքստում, այնքան հասկանալի ձևով, ինչպիսին երբեք չի եղել նախորդ ժամանակաշրջաններից ոչ մեկում:

Բայց պետք է միշտ կրկնել Տեր Հիսուս Քրիստոսի Անունով. այժմ կարևոր է դուրս գալու և Հարս-Եկեղեցու պատրաստության կոչը: Եթե նույնիսկ մենք գիտենք բոլոր խորհուրդները, բայց ճշմարիտ սեր չունենք Խոսքի հանդեպ, յուրաքանչյուր Խոսքի հանդեպ, մենք չենք կարող ո՛չ պատրաստ լինել, ո՛չ էլ սիրել Նրա հայտնությունը: Դա է տարբերությունը իմաստուն և հիմար կույսերի միջև: Մենք վերջին ժամանակներում ենք, և հիմա կարևոր է կատարյալ վերականգնումը Խոսքի համաձայն, որը տեղի է ունենալու մեր սիրելի Տիրոջ և Փեսայի գալստից առաջ: Ընտրյալները Խոսքից կկառչեն մինչև վերջ, և ոչ մի մեկնություն չի կարող մոլորեցնել նրանց: Նրանք հավատում են, որ միայն Սուրբ Գրքի վրա հիմնված ճշմարիտ պատգամը նախորդում է Քրիստոսի երկրորդ գալստին և հավիտենության մեջ էլ կգոհանան Տիրոջից Բրանհամ եղբոր մարգարեական ծառայության համար և փրկութան պատմության ծրագրում բոլոր իրադարձությունների ճիշտ դասավորության

համար: Նրանց է ուղղված այս երանությունը. *«Բայց երանելի են ձեր աչքերը, որ տեսնում են, և ձեր ականջները, որ լսում են»*:

Ծառան իր տիրոջից մեծ չէ

Բազմաթիվ հարցեր են ինձ ուղարկել, որոնց պետք է պատասխանել: էլեկտրոնային փոստով շատ նամակներ են կուտակվել: Մի նամակում կա 5 հարց, մյուսում՝ 8, մեկ ուրիշում՝ 20: Երբեմն հարցերի թիվը, որոնց պետք է պատասխանեմ, հասնում է քառասունհինգի: Բոլորը լուսաբանում են ցանկանում Բրանհամ եղբոր մեջբերումների վերաբերյալ: Խնդրում եմ, որ հասկանաք, որ անհնար է բոլոր այդ հարցերին պատասխանել:

Ինչ վերաբերում է աստվածաշնչյան թեմաներին, ես բոլորի մասին խոսել եմ իմ բազմաթիվ գրքերում՝ դրանք լուսաբանելով Սուրբ Գրքով: Դա վերաբերում է նաև Բրանհամ եղբոր արտասովոր և ճշմարիտ մարգարեական ծառայությանը: Հանձնարարությունը, որը Տերն ինձ տվեց 1962 թվականի ապրիլի 2-ին, և որը հաստատվեց մարգարեի կողմից 1962 թվականի դեկտեմբերի 3-ին, վկաների՝ Վուդ եղբոր և Սոտման եղբոր ներկայությամբ, հետևյալն էր՝ <u>քարոզել Խոսքը և բաժանել հավաքած կերակուրը</u>: Հանուն ընտրյալների մեկ անգամ էլ եմ հիշատակում այն, որ 1976 թվականի սեպտեմբերի 19-ին Տերը զորավոր ձայնով դիմեց ինձ՝ ասելով. «Իմ ծառա, ես քեզ ընտրել եմ Մատթ. 24:45-47 համարների համաձայն կերակուր բաժանելու համար»: Դա նույնքան ճշմարիտ է, որքան որ Աստված կենդանի է:

Այդ Նա է Ամովս 8:11 համարում կանխասել Իր Խոսքը լսելու սովը, և հոգևոր մարդն ապրում է Աստծո յուրաքանչյուր Խոսքով: Մեր Փրկիչն ասում է. *«Իմ կերակուրն այն է, որ Ինձ ուղարկողի կամքն անեմ և Նրա գործը կատարեմ»* (Հովհ.4:34): Պողոսի միջոցով Նա ասում է յուրաքանչյուր սպասավորի. *«Եթե այս բաները եղբայրներին խրատ տաս, <u>Քրիստոս Հիսուսի բարի ծառայող կլինես՝ սնված հավատի խոսքերով ու այն բարի վարդապետությամբ, որին հետևեցիր</u>»* (1 Տիմ.4:6):

Այնուամենայնիվ, 2 Տիմ.4-րդ գլխում գրված ենէ պիտի կատարվեր՝ գալու է մի ժամանակ, երբ *«ողջամիտ վարդապետությունը չեն*

հանդուրժի, այլ իրենց հատուկ ցանկությունների համաձայն ուսուցիչներ կդիզեն իրենց վրա՝ իրենց ականջներին հաճելի եղածների համեմատ»: Դրա համար Մատթ. 24:48-50 համարներում խոսվում է նաև չար ծառայի մասին, որն ասում է իր սրտում. *«Իմ տերն իր գալն ուշացնում է»* (հ. 48): Ինչպես նախ Մարդու Որդին ցանում է բարի սերմը, այնպես էլ բոլոր Իր ուղարկած մարդիկ (Մատթ. 13): Հետո միշտ սողոսկում է թշնամին և ցանում է մոլախոտը, որոմը՝ մեկնությունները: Հավատարիմ և խելացի ծառան ցանում է Խոսքի սերմը և բաժանում է հոգևոր կերակուրը: Չար ծառան ցանում է սեփական մեկնությունները:

Նրանք, ովքեր Աստծուց են ծնված, հավատում են և ուրախանում են, որ Աստված մեր ժամանակների համար Խոսքը քարոզելու հանձնարարություն է տվել: Երբեք չափազանց շատ չի լինի սա շեշտելը՝ Աստծուց ուղարկվածը քարոզում է միայն Աստծո Խոսքը, և նա, ով Աստծուց է, կլսի միայն Աստծո Խոսքը (1 Հովհ. 4:6) և ոչ թե առասպելները (2 Տիմ. 4:4):

Պողոսը գրել է. *«Այլ ամեն ինչում մեր անձերն ենք ընծայում՝ որպես Աստծո սպասավորներ՝ շատ համբերատարությամբ վշտերի մեջ, չարչարանքների ու նեղությունների մեջ...* **ճշմարտության Խոսքով,** *Աստծո զորությամբ, արդարության զրահով աջ կողմում և ձախ կողմում, փառքով և անարգանքով, պարսավանքով և գովասանքով. որպես մոլորեցնող, բայց ճշմարիտ»* (2 Կորնթ. 6:4-8):

1 Պետրոս 4-րդ գլխի 12-րդ համարից կարդում ենք, որ հավատացյալները երբեմն պետք է անցնեն փորձությունների միջով, որոնք բորբոքված կրակի նման են, որպեսզի այդպիսով հաղորդակից լինենք Քրիստոսի չարչարանքներին, *«որպեսզի Նրա փառքի հայտնության պահին էլ ցնծանք և ուրախանանք»* (1 Պետրոս 4:13):

Մեր Փրկիչն էլ զրպարտությունների է ենթարկվել Իր ծննդյան օրվանից մինչև համբարձման օրը: Դպիրները նրան մեղադրում էին անօրինական ձևով ծնվելու մեջ (Հովհ. 8:41), դիվահար լինելու մեջ (Հովհ. 10:20), Բեեղզեբուղի հետ կապ ունենալու մեջ (Ղուկաս 11:15), մոլորեցնող լինելու (Մատթ. 27:63), նույնիսկ չարագործ լինելու մեջ (Հովհ. 18:30): Նա կրեց բոլոր այդ անարգանքներն ու նույնիսկ ծաղրանքը խաչի վրա: Բայց Զատկի առավոտյան Նա

դուրս եկավ գերեզմանից հաղթանակած՝ հաղթեց սատանային, մահին, դժոխքին և հայտարարեց. *«Երկնքում ու երկրիս վրա ամեն իշխանություն ինձ տրվեց»*: Նա երկինք բարձրացավ ցնծության գոչյուններով (Սաղմոս 47:6, 68:19, Ղուկաս 24:50-53, Գործք 1:9-11):

Այն, ինչ եղավ Տիրոջ հետ, կլինի նաև իր ծառաների հետ. *«Հիշեցեք այն խոսքը, որ ես ասացի ձեզ, թե ծառան իր Տիրոջից մեծ չէ. եթե Ինձ հալածեցին, ձեզ նույնպես պիտի հալածեն, եթե Իմ խոսքը պահեցին, ձերն էլ պիտի պահեն»* (Հովհ. 15:20): Նա նաև ասաց. *«Երանի ձեզ, երբ մարդիկ ձեզ ատեն և հեռացնեն իրենց ընկերությունից, նախատեն ու վատաբանեն Մարդու Որդու համար»* (Ղուկաս 6:22):

Բայց կկատարվի նաև սա՝ *«Նրանք, որ արցունքով են ցանում, ցնծությամբ են հնձելու: Նա, ով լալով է գնում՝ թանկագին սերմը տանելով, անկասկած ցնծալով է վերադառնալու՝ իր խրձերը բերելով»* (Սաղմոս 126:5,6): Երբ Տերն Իր վերադարձի ժամանակ հայտնվի փառքով, այդ ժամանակ մենք էլ կուրախանանք ու կցնծանք. *«Ում դուք չտեսաք սիրում եք, և Ում, թեև հիմա չեք տեսնում, բայց Նրան հավատալով՝ ուրախանում եք անպատմելի և փառավոր խնդությամբ»* (1 Պետրոս 1:8): Այժմ մենք անարգանք ենք կրում Իր անվան համար, բայց երբ Նա վերադառնա, մենք կցնծանք, կուրախանանք և կստանանք փառաց պսակը (1 Պետրոս 5:4): Առաջին անգամ Նա եկավ մեր մեղքերի համար, երկրորդ անգամ կգա բոլոր Իրեն սպասողների համար (Եբր. 9:28), բոլոր Իր գալուստը սիրողների համար (2 Տիմ. 4:8), բոլոր պատրաստ եղողների համար (Մատթ. 25:10):

Հովհաննես առաքյալը քաջալերում է մեզ. *«Եվ այժմ, որդյակներ, մնացեք Նրա մեջ, որ երբ Նա հայտնվի, մենք համարձակություն ունենանք, և Նրա գալու պահին Նրա առջև չամաչենք+ և տակավին հայտնված չէ, թե ինչ պիտի լինենք, բայց գիտենք, որ երբ նա հայտնվի, Նրա նման կլինենք, որովհետև կտեսնենք նրան, ինչպես որ է»* (1 Հովհ.2:28, 3:2):

Ի՞նչ է կատարվելու, երբ Տերը մռնչա առյուծի նման

Եվս մեկ անգամ ասենք, որպեսզի վերջին մարդն էլ հասկանա. նա, ով հավատում է այնպես, ինչպես Գիրքն է ասում, յուրաքանչյուր թեմային վերաբերող աստվածաշնչյան համարների հայտնություն կստանա: Հայտնության 10-րդ գլխում Տերն իջնում է որպես Ուխտի Հրեշտակ՝ բացված գրքույկով, ոտքերը դնում է ծովի և ցամաքի վրա և բարձրաձայն աղաղակում է, **ինչպես առյուծն է մռնչում**: Այս համատեքստում բանալի բառը «մռնչալ»-ն է:

1963 թվականի մարտի 17-ին «Անցում» քարոզում Բրանհամ եղբայրը կարդաց Հայտն. 10:1 համարը և անմիջապես ասաց. **«Եթե նկատեցիք, դա Քրիստոսն է: Հին Կտակարանում Նա կոչվել է Ուխտի Հրեշտակը: Նա անմիջապես գալիս է հրեաների մոտ, որովհետև Եկեղեցու հետ գործն ավարտվել է, Եկեղեցին հափշտակվել է»**:

Դա Մաղաքիա 3:1 համարի երկրորդ մասի իրականացումն է. *«Եվ հանկարծակի է գալու իր տաճարի մոտ այն Տերը, որին դուք որոնում եք, և* **ուխտի հրեշտակը**, *որին դուք հավանում եք. ահա նա գալիս է,-ասում է զորաց Տերը»*:

Այն, ինչ կկատարվի իսրայելացի հավատացյալների հետ, նույնպես կանխասվել է մարգարեական Խոսքում: Այն ժամանակ կիրականանա սա՝ *«Եվ Տերը* **պիտի գոչի** *Սիոնից և Երուսաղեմից ձայն պիտի տա, և երկինքն ու երկիրը պիտի դողան, բայց Տերը ապավեն կլինի իր ժողովրդի համար, և ամրոց՝ Իսրայելի որդիների համար»* (Հովել 3:16):

«Տիրոջ հետևից պիտի գնան. առյուծի պես **մռնչալու է** *նա. երբ մռնչա, այնժամ որդիները դողալով կգան արևմուտքից»* (Ովսե 11:10):

«Տերը **մռնչալու է** *Սիոնից ու ձայն է տալու Երուսաղեմից, հովիվների արոտները, սգի են մատնվելու, ու Կարմելի գագաթը չորանալու է»* (Ամովս 1:2):

Միայն այն ժամանակ, երբ Նա մռնչա առյուծի պես, կգա այն պահը, երբ կլսվի յոթ որոտների ձայնը (Հայտն. 10:3): Երբ Հովհաննեսն ուզում էր գրել այն, ինչ ասվել էր, երկնքից մի ձայն

նրան ասաց. *«Կնքի՛ր այն բաները, որ յոթ որոտմունքները խոսեցին, և սրանք մի՛ գրիր»* (հ. 4): Թող Աստված բոլորի մեջ սուրբ վախ դնի, որ հարգեն սա, որովհետև դա է ԱՅՍՊԵՍ է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ:

Ուխտի Հրեշտակը, որը ոտքը դնում է ծովի և ցամաքի վրա և մռնչում է առյուծի նման, Իր ձեռքը բարձրացնում է երկինք և երդվում Նրանով, որ ապրում է հավիտյան, *«թե այլևս ժամանակ չի լինելու..»*: Դանիել մարգարեի գրքի 12-րդ գլխի յոթերորդ համարում խոսվում է այդ երդման մասին՝ ճշգրիտ նշելով ժամանակը. *«Երդում արեց հավիտյանս կենդանի եղողով, թե մի ժամանակ, ժամանակներ և կես. և երբ վերջանա սուրբ ժողովրդի ձեռքի փշրվելը, այս ամենը պիտի կատարվի»*: Ամե՛ն: Մարգարեական Խոսքում շատ պարզ ասվում է, որ երդման ժամանակից հետո երեքուկես տարի կանցնի մինչև ամեն բան կատարվի վերջին ժամանակահատվածում: Դանիել 7:25 համարում նույնպես կարդում ենք Իսրայելի հետ կապված երեքուկես տարվա վերաբերյալ, իսկ Հայտն. 12:14 համարում տեսնում ենք՝ մի ժամանակ, ու ժամանակներ ու կես ժամանակ, ինչպես Դանիել 12:7 համարում:

Ակնհայտ է, որ այլևս չի խոսվում Հարս-Եկեղեցու մասին, որը հափշտակվել է, այլ նեղության ժամանակաշրջանի և Իսրայելի մասին: Դանիել մարգարեին ասվեց. *«Ու եկա քեզ հասկացնելու, թե վերջին օրերին ինչ պիտի պատահի քո ժողովրդին, որովհետև տեսիլքը տակավին շատ օրերի համար է»* (Դանիել 10:14): Համապատասխան աստվածաշնչյան համարների օգնությամբ դժվար չէ այս մեծ իրադարձությունը դասավորել ճիշտ ձևով, այսինքն՝ սուրբգրային ձևով: Քանի որ դա այլևս չի վերաբերում Հարս-Եկեղեցուն, այլ Իսրայելի ժողովրդին, մենք կարիք չունենք անհանգստանալու դրա հետ կապված իրադարձությունների համար: Աստված մինչև վերջ հոգ կտանի Իր ժողովրդի համար:

Վերջին ժամանակն է, Նրա գալուստը մոտ է

Մատթ. 24-րդ, Մարկոս 13-րդ և Ղուկաս 21-րդ գլուխներում Տերը նաև խոսել է Քրիստոսի վերադարձին նախորդող զարգացումների մասին: Նա այս սերունդը համեմատեց Նոյի ժամանակվա սերնդի հետ (Ծննդոց 6 և 9) և Սոդոմի ու Գոմորի վիճակի հետ (Ծննդոց 19,

Ղուկաս 17): Լինելու է այնպես, ինչպես այն ժամանակ է եղել, և իրոք այդպես է:

Աստծո Խոսքը և արարչագործության ողջ կարգը ժամանակակից հասարակության կողմից դիտվում են որպես հնաոճ: Դա վերաբերում է զույգերին, ընտանիքին և մյուս ավանդական արժեքներին:

Պողոս առաքյալը, որը հատկապես քննադատվում է աստվածաբանների կողմից նկարագրեց ընդհանուր վիճակը Հռոմ. 1:24-32 համարներում. *«Այս պատճառով Աստված նրանց մատնեց անարգ կրքերի, և նույնիսկ նրանց կանայք բնական գործածությունը փոխարինեցին հակաբնականով. այդպես էլ տղամարդիկ, կնոջ բնական գործածությունը թողած, իրենց ցանկություններով միմյանց հանդեպ մոլուցքով վառվեցին. տղամարդիկ տղամարդկանց խայտառակություն էին գործում+»*: Դա նույնպես կատարվում է մեր աչքերի ու ականջների առջև:

Եկեղեցիներն էլ, մյուսների նման, հարմարվում են ժամանակի ոգուն: Վերջերս կարելի էր կարդալ այսպիսի վերնագիր՝ «Շրջադարձ կաթոլիկ եկեղեցում. Վատիկանը մոտենում է համասեռամոլներին ու լեսբուհիներին: Պարզաբանում. համասեռամոլները կարող են հարստացնել քրիստոնեական համայնքը իրենց տաղանդներով և հատկություններով»:

Բնականաբար, ամեն մարդ իրավունք ունի ապրել այնպես, ինչպես ինքն է ճիշտ համարում, և ոչ ոքի չպետք է արհարմարհել կամ խտրականության ենթարկել իր կենսակերպի պատճառով: Մարդու արժանապատվությունը անձեռնմխելի է:

Մինչդեռ նրա համար, ով հավատում է Աստծուն և իրոք վերստին ծնված է Հոգուց, Աստծո Խոսքը այսօր էլ մնում է պարտադիր ուղեցույց: Նա, ով պատկանում է Տիրոջ ճշմարիտ Եկեղեցուն, հարգում է Աստծո արարչագործության կարգը զույգի կյանքում և ընտանիքում, ինչպես նաև եկեղեցական կարգը և փրկության ծրագիրը, որը Նա մեզ փոխանցել է Իր Խոսքում: Նա աստվածային կարգին ենթարկվում է թե՛ մարմնավոր, թե՛ հոգևոր ոլորտում:

Բայց նախ պետք է կատարվի այն, ինչ ազդարարվեց բոլոր լսողներին առաջին քարոզի ժամանակ, երկու հազար տարի

առաջ, նորկտակարանյան Եկեղեցու հիմնադրման ժամանակ. *«Ապաշխարեցե՛ք և ձեզանից ամեն մեկը թող Հիսուս Քրիստոսի Անունով մկրտվի՝ մեղքերի թողության համար և Սուրբ Հոգու պարգևը կստանաք: Որովհետև այս խոստումը ձեզ ու ձեր զավակների համար է, նաև այն հեռավորների համար, ում մեր Տեր Աստված կկանչի»* (Գործք 2): Այսօրվա քարոզը պետք է համապատասխանի առաջին քարոզին, և Եկեղեցու վերջին շրջանի հավատացյալների համար պատվերները նույնն են, ինչ առաջին դարի հավատացյալների համար: Նա, ով թույլ չի տալիս, որ Սուրբ Հոգին իրեն հանդիմանի և չի ընդունում փրկագնման պարգևը, թույլ չի տա, որ իրեն առաջնորդեն ապաշխարության:

Ոչ ոք չի կարող փրկել ինքն իրեն. յուրաքանչյուրը պետք է կանչի Տիրոջ և Փրկչի Անունը, աղոթքով ներում և ազատություն խնդրի և հետո կարող է այսօր նույնպես ապրել այս խոստումի իրականացումը. *«Քանի որ ով, որ Տիրոջ անունը կանչի, պիտի փրկվի»* (Հռոմ.10:13): *«Ընդունելի ժամանակին քեզ լսեցի և փրկության օրը քեզ օգնեցի: Ահա՛, հիմա է ընդունելի ժամանակը, ահա, հիմա է փրկության օրը»* (2 Կորնթ. 6:2):

Աստծո Շնորհքով հավատացյալների կյանքը համապատասխանում է Աստծո Խոսքին թե՛ հոգևոր, թե՛ մարմնավոր ոլորտում: Որովհետև նա, ով Աստծո Խոսքի մեջ է, կարող է նաև Աստծո կամքի մեջ լինել, և միայն այդպես կարող ենք քայլել Աստծո հետ, ինչպես Ենովքը հափշտակվելուց առաջ (Եբր. 11:5): Այդպես Աստծո հաճությունը կհանգչի մեզ վրա, և մենք, որպես կատարյալ Հարս, կարող ենք գնալ հարսանիքի ընթիքին Փեսայի հետ: Ամեն:

«†Որպեսզի եկեղեցին իր առաջ փառավոր կանգնեցնի, որ որ մի արատ կամ խորշոմություն կամ ուրիշ բաներ չունենա, որ սուրբ ու անարատ լինի» (Եփես.5:27):

Բազում միսիոներական ճանապարհորդություններ են ծրագրված գալիք ամիսների համար: Խնդրում եմ, որ ինձ հիշեք ձեր աղոթքներում:

Գործելով Աստծո հանձնարարությամբ՝

Էվալդ Ֆրանկ

Լուսանկար Կուբայում հավաքույթի ժամանակ 2015 թվականի հունվարին: Թե՛ Հավանայում, թե՛ Հոլգվինում հավատացյալները ամեն տեղից գալիս էին լսելու Աստծո Խոսքը: Նույնիսկ Սանտյագո դե Կուբայից քարոզիչներ էին գալիս հավաքույթներին մասնակցելու համար: Ինչպիսի՜ շնորհք, որ կարող ենք տեսնել, թե ինչպես է վերջին պատգամը հասնում Աստծո բոլոր զավակներին բոլոր ազգերում: